ԳԵՂԱՇԵՆԻ
ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

<<ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ>>

ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

(5-7_ րդ. դասարաններ)

Շաբաթական 2 դ/ժամ,տարեկան 68դ/ժամ

Բացատրագիր

Խմբակի ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրությունների,հետաքրքրու-թյունների ու պահանջմունքների բավարարմանը։Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա։

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ ԿԱԶՄՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ, ԽՄԲԱԿԱՎԱՐԱՐ՝ Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

2023-2024 ուս.սարի

ՆՊԱՏԱԿԸ

- Ընտրի և օգտագործի հելունագործության համար համապատասխան նյութերը, միջոցները և գործիքները:
- Հասկանա գործվածքի և թելերի ճիշտ ընտրությունը, դրանց համապատասխանությունը:
- Հելունագործության գործընթացները քայլ առ քայլ, վերջնամշակումը:
- Տեղեկացված լինի աշխատանքի անվտանգության, նյութերի խնայողաբար օգտագործման և շրջակա միջավայրի մաքրության պահպանման վերաբերյալ:
- Ընտրի և օգտագործի դեկորատիվ նյութեր դիզայներական և նախագծային աշխատանքի համար:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

- Կարողանա պատրաստել կիրառելով նյութեր և գործիքներ:
- Կիմանա դրանց կիրառելության մասին և ձևավորի իր ճաշակն ու գեղագիտական կարողությունը:
- Կարողանա պատրաստել՝ օգտագործելով դրանց համար նախատեսված նյութեր և գործիքներ:
- Հասկանա հելունագործության համար համապատասխան նյութերի՝ գործվածքի, թելերի, հելունների, էսքիզի, զարդանախշերի ճիշտ ընտրության, գծափոխանցման, վերջնամշակման գործընթացները:
- Կարողանա գործել պարզ զարդակարեր և զարդանախշեր:
- Գործածի գործիքները, միջոցները ու սարքավորումները տեխնոլոգիական տարբեր գործընթացներում:
- Կազմի և հասկանա նախագծման հաջորդականությունը:
- Ներկայացնեն թիմային միջոցառումներ կազմակերպելով ցուցահանդես –վաճառք:

Թիվ	Թեմայի անվանում	ժամ	նպատակ
1.	Ժողովրդական արհեստների տեսակները	2 ժ	Ծանոթացնել ժողովրդական արհեստներին:
2.	Հյուսքի գործիքներ, հելուններ:Ամեն ինչ թելերի մասին:	2 ժ	Սովորեցնել ընտրել և օգտագործ ելիելունագործու-թյան համար համապատասխան նյութերը, միջոցները և գործիքները
3.	Հելունով հյուսքի այբուբենը: 1.Օդային հատ, 2.Միացնող սյուն:	2 ժ	Ծանոթացնել հյուսքի այբուբենին:
4.	Սյուն `առանց թել գցելու,սյուն`թել գցելով:	2 ժ	Ծանոթացնել հելունով սուներ գործելու գործընթացին:
5.	Կիսասյուն,սյուն `կրկնակի թել գցելով:	2 ժ	Սովորեցնել կրկնակի թել գցելով սյուն հյուսել:
6.	Սյուն `եռակի և ավել թել գցած:	2 ժ	Սովորեցնել տարբերել սյուների քանակը և անհրա-ժեշտությունը:
7.	2 կամ 3 սյուն միատեղ գործել:	2 ժ	Սովորեցնել տար-բերել զարդանախշի սյունյակները:
8.	Կանացի ամառային գլխարկ:	2 ժ	Ծանոթացնել գլխարկի դերը մարդու կյանքում
9.	Պարզագույն նախշեր: Մանկական զգեստ:	2 ժ	Ձևավորել պատկերացումներ գեղեցիկը պատրաստելու մեջ
10.	<<Ստուգողական նմուշը>հելունագործության մեջ:	*2 ժ*	Սովորեցնել զարդակարերի

			տեսակներին
11.	Պիկո `3 և 5 օդային հատով:	2 ժ	Սովորեցնել գործել օդային հատումով:
12.	Գործել <<Արեգա >> նախշազարդ:	2 ժ	Սովորեցնել արեգա նախշազարդը:
13.	Ինչպես թելը փոխարինել այլ գույնի թելով: <<Ժանյակներ>>:	2 ժ	Սովորեցնել հմտորեն թելերի գույները փոխարինել մեկը մյուսով:
14.	Գործել նախշազարդ:	2 ժ	Սովորեցնել նախշազարդերի տեսակների տարբերակում:
15.	Երկար, ձգված հատեր:Գործել աղջնակի զգեստ:	2 ժ	Զարգացնել գեղագիտական ճաշակ:
16.	Յուրօրինակ գործվածք `<<Եռանկյուն>>:	2 ժ	Ձևավորի հմտություններ:
17.	Հնգանկյուն,բազմանկյուն նախշատեսակ:	2 ժ	Սովորեցնել նախշատեսակների հյուսումը:
18.	Ոճային նորաձև թիկնոց:	2 ժ	Ձևավորել պատկերացումը ոճային նորաձևությունում:
19.	Բնական ծաղիկների հյուսում:	2 ժ	Արժևորել բնական նախշերի դերը:
20.	Հելունով ստանալ 8 ծաղկաթերթ ունեցող ծաղիկներ:	2 ժ	Զարգացնել կարողությունները:
21.	Ռելիեֆային նախշատեսակ :Գործել պայուսակ:	2 ժ	Սովորեցնել գեղեցիկ պայուսակ գործել:
22.	Պարուրահյուսք:Գործել 2գույնի թելով բարձիկ ասեղների համար:	2 ժ	Արժևորել ձեռքի աշխատանքների կարևորությունը:
23.	<<Արևածաղիկ>>` խոհանոցի բռնիչ:	2 ժ	Ծանոթացնել պատրաստման տեխնիկային և

			հմտություններին :
24.	Գործվածք եռանկյունի:	2 ժ	Ծանոթացնել գործելու սխեմային :
25.	Ինչպես հյուսել քառակուսի:	2 ժ	Ծանոթացնել գործելու սխեմային:
26.	Նախշատեսակ <<Խոպոպիկներ>>:	2 ժ	Սովորեցնել խոպոպիկներ նախշատեսակը:
27.	Գնդիկավոր նախշատեսակ:	2 ժ	Զևավորել հմտություններ:
28.	Բուրդոն նախշատեսակի հյուսք:	2 ժ	Սովորիեցնել նախշատեսակը:
29.	Փարթամ սյուներով նախշատեսակ:	2 ժ	Զևավորել հմտություններ:
30.	Հելունագործ անձեռոցիկներ:	2 ժ	Զևավորել պատկերացումներ գեղեցիկը պատրաստելու մեջ:
31.	Հելունագործ երիզակներ:	2 ժ	Սովորեցնել տարբերել հելունա-գործ երիզակները:
32.	<<Ցանցկեն >>հյուսք:	2 ժ	Սովորեցնել ցանցկեն հյուսքը:
33.	Ֆիլիգրանային նախշ:	2 ժ	Սովորեցնել ֆիլիգրանային նախշ:
34.	Խոհանոցային յուրօրինակ բռնիչ:	2 ժ	Խթանել հետաքրքրություն-ներ խոհանոցային պարագաների նկատմամբ:
		Ընդ. 68ժամ	